# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ (ԶՖԳ) ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ՊՐՈՊԱՐԿՈ) ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 28-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ֆրանսիայի Հանրապետության Կառավարությունը (այսուհետ՝ Կողմեր),

ՀԻՄՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության Կառավարության միջև 2018 թվականի մայիսի 28-ին կնքված՝ «Հայաստանում Զարգացման ֆրանսիական գործակալության (ԶՖԳ) և Տնտեսական համագործակցության խթանման և մասնակցության ընկերության (ՊՐՈՊԱՐԿՈ) (միասին՝ ԶՖԳ խումբ) հիմնադրման և գործունեության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր),

ՀԻՇԱՏԱԿԵԼՈՎ, մի կողմից, որ ԶՖԳ խումբը զարգացող երկրներին ուղղված պետական աջակցության մասով առանցքային տեղ է զբաղեցնում ֆրանսիական համակարգում, և որ այն շուրջ վաթսուն տեղական ներկայացուցչություն ունեցող իր ցանցի շնորհիվ գործունեություն է ծավալում ութսունից (80) ավելի երկրում,

ՀԻՇԱՏԱԿԵԼՈՎ, մյուս կողմից, որ «Էքսպերտիզ ֆրանս» գործակալությունը՝

- հիմնադրվել է 2014 թվականի հուլիսի 7-ի կողմնորոշման և ծրագրավորման հմ. 2014-773 օրենքով, որը սահմանում է զարգացման և միջազգային համերաշխության Ֆրանսիայի քաղաքականության ընդհանուր սկզբունքները: Նրա կարգավիճակը փոփոխվել է համերաշխ զարգացման և

գլոբալ անհավասարության դեմ պայքարի մասին 2021 թվականի օգոստոսի 4-ի հմ. 2021-1031 ծրագրային օրենքով՝ թույլ տալու համար ՁՖԳ խմբում դրա ինտեգրումը, ինչը կնպաստի զարգացման և միջազգային համերաշխության ոլորտներում Ֆրանսիայի քաղաքականության իրագործմանը,

- օրենքի տառին համապատասխան՝ իրականացնում է հանրային ծառայության հանրաճանաչ առաքելություն: Նրա գործառույթն է՝ մշակել ու իրականացնել ծրագրեր և կատարել բարձրորակ փորձագիտական աշխատանքներ (որում պետության պահանջով ներգրավված են փորձագետներ ու տեխնիկական հարցերով օգնականներ) հանրային գործունեության այնպիսի հիմնական ոլորտներում, ինչպիսիք են կառավարումը, անվտանգությունը, շրջակա միջավայրը, առողջապահությունը, կրթությունը և այլն: Նրա գործունեությունը ֆինանսավորվում է երկկողմ ու բազմակողմ դոնոր կազմակերպությունների հաշվին, հիմնականում՝ Ֆրանսիայի Կառավարության կողմից, մասնավորապես՝ Զարգացման ֆրանսիական գործակալության և Եվրոպական միության միջոցով, որոնց համար «Էքսպերտիզ ֆրանս» գործակալությունը կարող է հանդես գալ որպես իրականացնող գործակալություն և դոնոր կազմակերպության պատվիրակ,

- օժանդակում է իր գործընկերներին (հիմնականում՝ կառավարություններ, ինչպես նաև տարածաշրջանային կազմակերպություններ, տեղական իշխանություններ և քաղաքացիական հասարակության կազմակերպություններ)՝ ամրապնդելու համար նրանց ինստիտուտները, քաղաքականությունները և նրանց անդամների փորձագիտական կարողությունները: Այդ նպատակով նա առաջարկում է տարբեր գործունեություն, մասնավորապես՝ փորձագիտական ներուժի ներգրավում, աշխատանքային խմբերի ձևավորում, սեմինարների կազմակերպում, վերապատրաստումներ, ուսումնական այցերի կազմակերպում, դրամաշնորհների տրամադրում, գույքի տրամադրում և աշխատանքների կատարում: Նա ազգային գործընկերների հետ ապահովում է կարիքների հստակեցումը, իրականացվող ծրագրերի ընթացքի մոնիտորինգը և վերջնական գնահատումը,

ՀԻՇԱՏԱԿԵԼՈՎ, որ «Էքսպերտիզ ֆրանս» գործակալությունն ինտեգրված է ՁՖԳ խմբում՝ համերաշխ զարգացման և գլոբալ անհավասարության դեմ պայքարի մասին 2021 թվականի օգոստոսի 4-ի հմ. 2021-1031 ծրագրային օրենքի դրույթներին համապատասխան,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ սույն արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) կնքումը բխում է Կողմերի ընդհանուր շահերից՝ թույլ տալու համար «Էքսպերտիզ ֆրանս» գործակալությանը՝ որպես ՁՖԳ խմբի անդամ, տրամադրելու իր ֆինանսական և տեխնիկական օժանդակությունը Հայաստանում՝ Հայաստանի քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացման նպատակներին համապատասխան,

ՅԱՆԿԱՆԱԼՈՎ «Էքսպերտիզ ֆրանս» գործակալությանը շնորհել նույն առանձնահատուկ կարգավիճակը, որը ՁՖԳ խումբն ունի Հայաստանի տարածքում,

ԳՈՐԾԵԼՈՎ անկախության, ինքնիշխանության, ներքին գործերին չմիջամտելու և իրավահավասարության սկզբունքների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ֆրանսիայի Հանրապետության Կառավարությունը համաձայնում են հետևյալի մասին.

## Հոդված 1

Սույն Արձանագրության նպատակն է տարածել Համաձայնագրի կիրառումը «Էքսպերտիզ ֆրանս» գործակալության վրա՝ որպես ՁՖԳ խմբի անդամի:

## Հոդված 2

1. Կողմերը համաձայնում են, որ Համաձայնագիրը փոփոխվի այնպես, որ Համաձայնագրում ՁՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին կատարվող բոլոր հղումներն ընդգրկեն նաև «Էքսպերտիզ ֆրանս» գործակալությունը:

2. Կողմերը համաձայնում են, որ Համաձայնագրի 7-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն ՊՐՈՊԱՐԿՈ-ին տրամադրվածյուն հնարավորությունները, որոնք նրան թույլ են տալիս դիմելու առանձին ներկայացուցչություն բացելու

խնդրանքով, տրվեն նաև «Էքսպերտիզ ֆրանս» գործակալությանը:

### Հոդված 3

Համաձայնագրի համաձայն՝ Հայաստանի տարածքում ՁՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին հայկական կողմի կողմից վերապահված առավելությունները և արտոնությունները տարածվում են «Էքսպերտիզ ֆրանս» գործակալության վրա՝ որպես ՁՖԳ խմբի անդամի, ինչպես նաև նրա վարձած էքսպատրիատների (գործուղված մասնագետների) վրա՝ այնքանով, որքանով դա անհրաժեշտ է առաքելությունների իրականացման համար: Սակայն եկամուտները հարկերից ազատելու արտոնությունները չեն տարածվում «Էքսպերտիզ ֆրանս» գործակալության կողմից վարձված Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վրա:

### Հոդված 4

Սույն Արձանագրությունը կցված է Համաձայնագրին և կազմում է նրա անբաժանելի մասը:

### Հոդված 5

1. Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից պահանջվող ներպետական ընթացակարգերը կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու ամսաթվին հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրը:

2. Սույն Արձանագրությունը կարող է ցանկացած ժամանակ փոփոխվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Այդ փոփոխությունները ձևակերպվում են արձանագրություններով և ուժի մեջ են մտնում սույն հոդվածի առաջին կետով նախատեսված կարգով:

3. Սույն Արձանագրության մեկնաբանման և կիրառման շուրջ ծագած բոլոր տարաձայնությունները լուծվում են բարեկամաբար՝ Կողմերի միջև խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

4. Սույն Արձանագրությունը կնքվում է անորոշ ժամկետով: Կողմերից յուրաքանչյուրը կարող է ցանկացած պահի դադարեցնել դրա գործողությունը՝ վեց (6) ամիս առաջ այդ մասին գրավոր ծանուցելով մյուս Կողմին: Այս ժամկետը հաշվարկվում է նշված ծանուցումը մյուս Կողմի ստանալու օրվանից: Սույն Արձանագրության գործողության դադարեցումը չի ազդում ընթացքում գտնվող ծրագրերի և պայմանավորվածությունների առնչությամբ սույն Համաձայնագրից բխող՝ Կողմերի իրավունքների և պարտականությունների վրա:

5. Սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու պահից կիրառվում է ընթացքում գտնվող ծրագրերի, պայմանավորվածությունների և ցանկացած համագործակցության նկատմամբ:

Ստորագրված է Երևանում 2025 թվականի մայիսի 26-ին, 2 (երկու) բնօրինակով՝ հայերեն և ֆրանսերեն: Ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝

Արարատ ՄԻՐԶՈՅԱՆ,
արտաքին գործերի նախարար

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝

Ժան-Նոել ԲԱՐՈ,
Եվրոպայի և արտաքին գործերի նախարար

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2025թ. մայիսի 26-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև «Հայաստանում Զարգացման Ֆրանսիական գործակալության (ԶՖԳ) և Տնտեսական համագործակցության խթանման և մասնակցության ընկերության (Պրոպարկո) հիմնադրման և գործունեության մասին» 2018 թվականի մայիսի 28-ի համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» արձանագրության՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

**Հայաստանի Հանրապետության**
**արտաքին գործերի նախարարության**
**միջազգային պայմանագրերի և**
**իրավունքի վարչության պետի պ/կ**

**Լիանա Գրիգորյան**